ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՐԱԿԵՐՏԻ ԴԱՎԻԹ ԼԱԴՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հեռ. 093569056

N 8

«25»«10»2021թ.

ՀՀ Արարատի մարզպետ
պարոն Ռ.Թոնոյանին

Հարգարժա՛ն պարոն Թոնոյան

Հայտնում ենք Ձեզ, որ «Դարակերտի Դավիթ Լադոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացած դասվարի /17 ժամ/, տեխնոլոգիայի /աղջիկների/ /6 ժամ/, կերպարվեստի /2.5 ժամ/, ֆիզիկայի /15 ժամ/, մաթեմատիկայի /14 ժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար, ըստ սահմանված կարգի հայտարարվել է մրցույթ, որը կկայանա 2021թ.-ի նոյեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Արարատի մարզի Դարակերտի միջնակարգ դպրոցում:

Առդիր՝ 1 թերթ

Տնօրեն՝ Օ.Անտոնյան

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Դարակերտի Դ.Լադոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի դասվարի (17 դասաժամ), տեխնոլոգիայի (6 դասաժամ աղջիկների խումբ), կերպարվեստի (2.5 դասաժամ), ֆիզիկայի (15 դասաժամ), մաթեմատիկայի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարրցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիմում),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

*Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,** բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:*

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 4 -ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Դարակերտի Դավիթ Լադոյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (041) 56-90-56 կամ (093) 56-90-56 հեռախոսահամարներով: